ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Տեղ, 0284-96-2-20, hamaynqtegh@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025ԹՎԱԿԱՆԻ N 212-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 22.1 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն հաստատված կարգի 9-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2025 թվականի նոյեմբերի 11-ի հայտը, որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ Մ-9, /Մ-2/ (Նորավանի խաչմերուկ) - Գորիս-Տեղ-Կոռնիձոր-ՀՀ սահման ավտոճանապարհի 40-րդ կմ-ից դեպի զորամաս (Քարաշեն) տանող 0,6կմ երկարությամբ ճանապարհահատվածի հիմնանորոգման աշխատանքների համար:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3. Աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարողին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂՈՒԼՈՒՆՑ

2025թ. նոյեմբերի 19
գ.Տեղ